

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 1/2

13 հունվարի 2015 թ.

Քննարկվեց «Ինտեռու-Պառեքսգլոմ» ՍՊԸ բողոքը ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 29.09.2014 թ-ի թիվ 0265 որոշման դեմ:

«Ինտեռու-Պառեքսգլոմ» ՍՊԸ բողոքում բերված փաստարկները.

ՀՀ Ֆինանսների նախարարության Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետը 29.09.2014 թ-ին կայացրել է թիվ 0265 որոշումը, համաձայն որի «Ինտեռու-Պառեքսգլոմ» ՍՊԸ-ից հօգուտ պետությունից պետք է գանձել 5.308.761 ՀՀ դրամ, որպես ԱԱՀ-ի գումար:

Համաձայն որոշման, գումար գանձելու հիմք է հանդիսացել 02.08.2012 թ-ի թիվ C 26360 ԲԱՀ-ով «Ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրված օգտագործված անվավոր էքսկավատորի ավելացված արժեքի հարկի վճարումը, որը հետաձգվել է մինչև 02.08.2013 թ-ը:

Նշված փաստը հաստատվում է ՀՀ Ֆինանսների նախարարության Կոտայքի տարածքային հարկային տեսչության կողմից տրված բազմաթիվ տեղեկանքներով: Ընդ որում, 21.05.2014 թ-ի և 13.08.2014 թ-ի տեղեկանքները տրվել են ներկայացնելու Արարատյան մաքսատուն:

Ավելին, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 46-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն, վարչական վարույթի առավելագույն ժամկետը 30 օր է: Օրենքով կարող են սահմանվել հատուկ՝ 30 օրից կարճ կամ ավելի երկար ժամկետներ: Հետևաբար, եթե նույնիսկ չի վճարվել նշված գումարը, ապա այդ գումարը բռնագանձելու մասին վարչական ակտը պետք է կայացվեր մինչև 02.09.2013 թ-ը: Մինչդեռ վիճարկվող որոշումը կայացվել է մեկ տարի և ավելի ժամանակ անց, որպիսի պարագայում նույնպես վարչական ակտը ենթակա է վերացման:

Վիճարկվող վարչական ակտը՝ 29.09.2014 թ-ի թիվ 0265 որոշումը, փոստային առաքմամբ ստացվել է 06.10.2014 թ-ին:

Վերոգրյալի հիման վրա և ղեկավարվելով «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 67-րդ հոդվածի, 10-րդ և 11-րդ գլխի կանոններով ընկերությունը խնդրում է վերադասության կարգով քննության առնել սույն բողոքը և անվավեր ճանաչել ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 29.09.2014 թ-ի թիվ 0265 որոշումը:

ՀՀ Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը.

ՀՀ ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետը, ուսումնասիրելով «Ինտեռու-պառեքսզլոմ» ՍՊԸ կողմից 2012 թ-ի օգոստոսի 2-ին թիվ C 26360 ԲՄՀ-ով «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ձևակերպված օգտագործված անվավոր էքսկավատորի մաքսային ձևակերպման փաստաթղթերը պարզել է, որ «Ինտեռու-պառեքսզլոմ» ՍՊԸ 2012 թ-ի օգոստոսի 2-ին թիվ C 26360 ԲՄՀ-ով «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրել է օգտագործված անվավոր էքսկավատոր, որի ավելացված արժեքի հարկի վճարումը հետաձգվել է մինչև 02.08.2013 թ-ը, սակայն ընկերությունը սահմանված ժամկետում չի վճարել այդ ռեժիմով նախատեսված ավելացված արժեքի հարկը: Հայտարարագիրը 02.08.2012 թ-ին ընդունվել է մաքսային մարմնի կողմից, ինչի կապակցությամբ հայտարարագրի վրա նշվել է հայտարարագրի ընդունման համարը և ամիսը, ամսաթիվը (թիվ L 21975): ՀՀ մաքսային օրենսգրքի 25-րդ հոդվածի համաձայն՝ «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմը կարգավորում է ապրանքների և տրանսպորտային միջոցների ներմուծումը ՀՀ մաքսային տարածք՝ առանց հետագա արտահանման պարտավորության:

02.08.2012 թ-ի թիվ C 26360 ԲՄՀ-ով «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրված օգտագործված անվավոր էքսկավատորի համար մինչև 02.08.2013 թ. ենթակա էր վճարման ավելացված արժեքի հարկ և այն սահմանված ժամկետում չվճարվելու համար տույժեր:

«Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ նույն հոդվածով սահմանված կարգով ԱԱՀ-ի վճարման ժամկետի հետաձգմամբ ՀՀ ներմուծված ապրանքների մասով մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են պետական բյուջե մինչև հետաձգման ժամկետը լրանալու օրը, եթե ԱԱՀ-ի գումարների վճարման ժամկետի հետաձգումը նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքերում չի դադարեցվել և (կամ) ԱԱՀ-ի վճարման հետաձգման ժամկետը դադարելու օրվան հաջորդող տասնօրյա ժամկետում՝ նույն հոդվածի երկրորդ մասով սահմանված դեպքերում: Սահմանված ժամկետում ԱԱՀ-ի գումարները չվճարվելու դեպքում օրենքով սահմանված տույժերի հաշվարկումը, իսկ հարկ վճարողի կողմից տույժերը հաշվարկված լինելու դեպքում՝ դրա նկատմամբ հսկողությունն իրականացնում է հարկային մարմինը: Մաքսային մարմինների կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները վճարվում են որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ, իսկ սահմանված ժամկետում չվճարված գումարների նկատմամբ հաշվարկված տույժերը վճարվում են որպես հարկային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:

«Ինտեռու-պառեքսզլոմ» ՍՊԸ կողմից թիվ C 26360 մաքսային հայտարարագրով հայտարարագրված ապրանքի համար 26.09.2014 թ-ի դրությամբ ՀՀ պետական բյուջե ենթակա է վճարման 5.308.761 դրամ ԱԱՀ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ մաքսային օրենսգրքի 25-րդ, «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6-րդ, 6.1-րդ և «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 53-րդ և 58-րդ հոդվածներով ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետը 29.09.2014 թ-ին ընդունել է թիվ 0265 որոշումը «Ինտեռու-պառեքսզլոմ» ՍՊԸ-ից հօգուտ պետբյուջեի 5.308.761 դրամ ԱԱՀ-ի գումար գանձելու վերաբերյալ:

Քննարկվող դեպքում «Ինտեռուս-պատերազում» ՍՊԸ կողմից 2012 թ-ի օգոստոսի 2-ին թիվ С 26360 ԲՄՀ-ով «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով հայտարարագրվել է օգտագործված անվավոր էքսկավատոր, որի ավելացված արժեքի հարկի վճարումը հետաձգվել է մինչև 02.08.2013 թ-ը, սակայն ընկերությունը խախտելով «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի 6.1-րդ հոդվածի 3-րդ մասի դրույթները մաքսային մարմնի կողմից հաշվարկված ԱԱՀ-ի գումարները սահմանված ժամկետում չի վճարել որպես մաքսային մարմինների կողմից պետական բյուջե հավաքագրվող գումարներ:

Ելնելով վերոգրյալից՝ Հանձնաժողովը գտնում է, որ ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 29.09.2014 թ-ի թիվ 0265 որոշումն ընդունվել է ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

ՀՀ ՖՆ Արարատյան տարածաշրջանային մաքսատան պետի 29.09.2014 թ-ի թիվ 0265 որոշումը թողնել անփոփոխ, իսկ բողոքը՝ մերժել:

Սույն որոշմանը չհամաձայնվելու դեպքում այն ուժի մեջ մտնելու օրվանից երկու ամսվա ընթացքում կարող է բողոքարկվել ՀՀ վարչական դատարան:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ